Հաստատում եմ

ՀՊՄՀ ռեկտոր՝ _____Ս.Գևորգյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

Կրթական ծրագրի մասնագիրը (ԿԾ), նախատեսված է դիմորդների, ուսանողների, ակադեմիական անձնակազմի, շահեկիրների և գործատուների համար: Այն տրամադրում է ծրագրի հիմնական հատկանիշների համառոտ ամփոփումը՝ իր մեջ ներառելով ուսումնառության նախատեսվող արդյունքները, մանրամասն տեղեկություններ ուսուցման, դասավանդման և գնահատման մեթոդների, ուսումնառության արդյունքների և յուրաքանչյուր մոդուլի բովանդակության մասին, որն ակնկալում է ողջամիտ ուսանողը և որին կարող է հասնել, եթե նա լիարժեքորեն օգտվում է իրենառաջարկվող և տրամադրվող ուսումնական հնարավորություն-ներից:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. **Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը**	Ինֆորմատիկա 011401.06.7
2. **Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ**	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
3. **Շնորհվող որակավորումը**	Մանկավարժության մագիստրոս
4. **Կրեդիտների քանակը**	120 (հարյուր քսան)
5. **Բարձրագույն ուսումնական հաստատություն**	ՀՊՄՀ
6. **Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ**	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի
7. **Կրթական ծրագրի հիմնական սպասարկող ամբիոն(ներ)**	Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
8. **Կրթական ծրագրի ուսուցման լեզու**	Հայերեն
9. **Կրթական ծրագրի ուսուցման ձևը**	Առկա, հեռակա
10. **Կրթական ծրագիրը հավատարմագրված/ լիցենզավորված է՝**	Լիցենզավորված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից

11. **Կրթական ծրագրի ընդունելության չափանիշները (մուտքի պայմաններ):**

Դիմորդը պետք է ունենա առնվազն բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի մասնագիտական կրթության վկայական (դիպլոմ): Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

12. **Կրթական ծրագրի կառուցվածքը և նկարագիրը**

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ՈՒՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ

Պարտադիր դասընթացներ՝ 25 կրեդիտ

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր գիտական և հոգեբանամանկավարժական գիտելիքների տեսական հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ՝ 2 կրեդիտ

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ

Կրթամասը ներառում է պարտադիր մասնագիտական գիտամեթոդական, մասնագիտության գիտատեսական և կամընտրական դասընթացներ:

Պարտադիր դասընթացներ՝ 23 կրեդիտ

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր և հատուկ մասնագիտական գիտելիքների հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ՝ 23 կրեդիտ

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍ – 47 կրեդիտ

Ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտարտարությամբ ուսանողի կողմիրց իրականացվող հետազոտական աշխատանքը, մանկավարժական և հետազոտական պրակտիկաները, ինչպես նաև մագիստրոսական ատենախոսության պատրաստումն ու պաշտպանությունը:

13. **Ծրագրի նպատակները**

Ծրագրի նպատակն է.

- մագիստրոսի աստիճանում պատրաստել «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (Ինֆորմատիկա)» դպրոցական առարկայի դասավանդող մրցունակ ուսուցիչներ տարրական, հիմնական, ավագ դպրոցների և դասավանդողներ նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների համար,
- մանկավարժության, թվային գրագիտություն և համակարգչային գիտության ոլորտներում հիմնարար մեթոդաբանական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, քննադատական և վերլուծական մտածողություն,
- մանկավարժության, թվային գրագիտություն և համակարգչային գիտության ոլորտներում հետազոտություններ կատարելու, կրթական հաստատությունների կառավարման, ինֆորմատիկայի դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառման կարողություններ:

14. Ծրագրի կրթական ելքային արդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1. Ներկայացնել կրթության առաքելությունն ու փիլիսոփայությունը, կրթության սոցիալ-մանկավարժական խնդիրները, համագործակցային և ստեղծագործական կրթական միջավայրի դերը՝ կանխատեսելով կրթության զարգացման ուղղությունները և առաջացած խնդիրների լուծման հնարավորությունները, ինչպես նաև քննարկել ինֆորմատիկայի և նրան առնչվող գիտակարգերի առաջանցիկ ձեռքբերումները, մարտահրավերները, հարացույցերը, կրթության համակարգի զարգացման ազգային, համամարդկային համատեքստերում, ժամանակակից մանկավարժական և մասնագիտական գործունեության կազմակերպման իրավական հենքը:

Ա2. Մեկնաբանել մանկավարժական գործընթացը՝ հաշվի առնելով ժամանակակից սոցիալ-մշակութային զարգացումների համատեքստում աշակերտների և մեծահասակների տարիքային, հոգեբանամանկավարժական, սոցիալականացման օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները և նրանց հետ աշխատելու մեթոդներն ու տեխնոլոգիաները:

Ա3. Կատարել հետազոտություններ, ներկայացնելու հետազոտական աշխատանքի առանձնահատկությունները, հետազոտության արդյունքների հաշվետվությունը հոդվածի կամ զեկույցի ձևով:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Բ1. Կիրառել մանկավարժական և տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ՝ դրանք հարմարեցնելով կրթության համակարգի մարտահրավերներին, մանկավարժական ու մասնագիտական գործունեության ընթացքում լուծել տեսական ու գործնական խնդիրներ՝ ստեղծագործաբար կիրառելով մանկավարժահոգեբանական հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները:

Բ2. Վերլուծել մանկավարժության ոլորտի գիտական հիմնախնդիրները, հետազոտողների՝ ընտրված թեմաներով ուսումնասիրությունների արդյունքները և եզրահանգումները՝ առաջադրելով գիտական վարկածներ, նորարական գաղափարներ, ինչպես նաև մշակել դրանց իրագործմանն ուղղված համապատասխան ծրագրային փաթեթներ և ռազմավարություններ:

Բ3. Կատարել որակական և քանակական հետազոտություններ՝ հայտորոշելով անձի զարգացման մակարդակը, առանձնահատկությունները, ձեռքբերումները և կրթական կարիքները, մշակել մանկավարժական խնդիրների լուծման նախագծեր, հետազոտական աշխատանքներ հանրակրթության, բուհական, հատուկ և մասնագիտական կրթության ոլորտներում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Գ1. Ձևակերպել ուսումնառության վերջնարդյունքները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը նպատակին, ազգային և համամարդկային արժեքներին, ինչպես նաև գնահատման ու հետադարձ կապի ապահովման կոմպետենցիաներ:

Գ2. Կիրառել հետազոտության, գիտելիքի գործնական կիրառման, ինքնուրույն աշխատելու, համագործակցելու, թիմային աշխատանք կառավարելու, առնվազն մեկ օտար լեզվով հաղորդակցվելու, ամբողջ կյանքի ընթացքում ինքնակրթությամբ զբաղվելու առանցքային կոմպետենցիաներ մասնագիտական ոլորտում:

15. Գնահատման մեթոդներ

«Ինֆորմատիկա» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառույթներով:

Գնահատվում են ուսանողի՝

ա. գիտելիքը,

բ. ունակություններն ու կարողությունները,

գ. ինքնուրույնությունը և ակտիվությունը:
Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական (սկզբնական) վիճակը և վերջնական (ելքային) արդյունքը:
Դասընթացների գնահատման մեթոդներից են՝
1. տեսական դասընթացների պարագայում՝ գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, հաշվետվություններ, էսսեներ (խոհագրություններ) և բանավոր և գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ),
2. գործնական դասընթացների պարագայում՝ գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, բանավոր հարցումներ և հարցազրույցներ, էսսեներ և բանավոր և գրավոր պրեզենտացիաներ,
Հետազոտական աշխատանքների (հաշվետվություն, մագիստրոսական թեզ) գնահատումն իրականացվում է առանձին՝ հանձնաժողովի կողմից՝ նախապես սահմանված գնահատման կարգի համաձայն:
Գնահատման ընթացքում կիրառվում է տառային և վարկանիշային գնահատում (100 միավոր), համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:
Գնատման մանրամասները տես՝ ՀՊՄՀ ուսանողների գիտելիքների գնահատման կարգում: http://aspu.am/

16. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ

Ուսուցումն իրականացվում է խմբային և հոսքային ձևաչափերով, իսկ սեմինար, գործնական, հետազոտական աշխատանքները և պրակտիկան ներառված են փոքրաթիվ ենթախմբերում: Դասավանդման մեթոդները կառուցված են ուսանողակենտրոն մոտեցմամբ՝ ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:
Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական, լաբորատոր պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:
Դասախոսություններ – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն:
Սեմինարներ – խմբային և անհատական ստեղծագործականի, քննարկումների և անդրադարձի թողարկում, քննադատական մտածողության զարգացում:
Գործնական պարապմունքներ – փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն, խնդիրների լուծում:
Լաբորատոր աշխատանք – համակարգչային լաբորատորիաներում գործնական խնդիրների, ծրագրային հավելվածների նախագծում, մշակում և իրականացում:
Աջակցվող, ինքնուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ – անհատական հետազոտության և զարգացման աջակցում:
Անհատական խորհրդատվություն – ինքնուրույն ուսման ավելի ընդլայնված, խոր վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

17. Ուսումնական պլանի քարտեզը

Տես կցված հավելված 3

18. Մասնագիտական գործունեության ոլորտներ

Ինֆորմատիկա մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագիրն ավարտելուց հետո շրջանավարտը կարող է աշխատել հետևյալ բնագավառներում՝

- կրթական հաստատություններում (հանրակրթական դպրոց, միջին մասնագիտական հաստատություն, քոլեջ)՝ որպես ինֆորմատիկայի ուսուցիչ, օպերատոր, համակարգչային տեխնիկայի մասնագետ,
- ծրագրավորման կենտրոններում և կազմակերպություններում՝ որպես ծրագրավորող, ցանցային ադմինիստրատոր:

19. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Կրթական ծրագրերի մշակման համար որպես արտաքին կողմնորոշիչներ ծառայել են հետևյալ աղբյուրները՝

- ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի պահանջները:
- Բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները:
- Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը:
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը (դուբլինյան նկարագրիչները):
- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը:

- Համապատասխան մասնագիտական կազմակերպությունների, կառույցների, ընկերակցությունների, օրենսդիր և ոլորտը կարգավորող մարմինների պահանջները և ցուցումները:
- Վերազգային մակարդակում սահմանված առարկայական կողմնորոշիչները (ինչպես, օրինակ, տարբեր առարկայական ոլորտների համար սահմանված ծրագրային հենանիշերը/բենչմարքները):
- ՀՀ-ում մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները:
- Արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման կրթական ծրագրերը և առնչվող այլ փաստաթղթեր:

20. «Ինֆորմատիկա» ՄԿԾ-ի շրջանակներում դասախոսական կազմի որակավորմանը և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները

Դասավանդողները պետք է՝
ա/ ունենան որակավորում, որը համապատասխանում է ՄԿԾ ելքային արդյունքներին,
բ/ տիրապետեն կրթական ծրագրի մաս կազմող այլ դասընթացներին,
գ/ ունենան մանկավարժական որակներ:

21. Հետագա ուսման հնարավորությունները

Ազգային որակավորումների շրջանակով սահմանված 8-րդ (հետազոտողի) մակարդակ:

«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ			
N	**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Ա1	Ներկայացնել կրթության առաքելությունն ու փիլիսոփայությունը, կրթության սոցիալ-մանկավարժական խնդիրները, համագործակցային և ստեղծագործական կրթական միջավայրի դերը՝ կանխատեսելով կրթության զարգացման ուղղությունները և առաջացած խնդիրների լուծման հնարավորությունները, ինչպես նաև քննարկել ինֆորմատիկայի և նրան առնչվող գիտակարգերի առաջանցիկ ձեռքբերումները, մարտահրավերները, հարացույցերը, կրթության համակարգի զարգացման ազգային, համամարդկային համատեքստերում, ժամանակակից մանկավարժական և մասնագիտական գործունեության կազմակերպման իրավական հենքը:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • սեմինար • խմբավորում • խորանարդում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ • էսսե • կուրսային աշխատանք
Ա2	Մեկնաբանել մանկավարժական գործընթացը՝ հաշվի առնելով ժամանակակից սոցիալ-մշակութային զարգացումների համատեքստում աշակերտների և մեծահասակների տարիքային, հոգեբանամանկավարժական, սոցիալականացման օրինաչափությունները, զարգացման առանձնահատկությունները և նրանց հետ աշխատելու մեթոդներն ու տեխնոլոգիաները:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • սեմինար • խմբավորում • խորանարդում • քննարկում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ • կուրսային աշխատանք
Ա3	Կատարել հետազոտություններ, ներկայացնելու հետազոտական աշխատանքի առանձնահատկությունները, հետազոտության արդյունքների հաշվետվությունը հոդվածի կամ զեկույցի ձևով:	• դասախոսություն • ցուցադրություն • բացատրություն • սեմինար • խմբավորում • խորանարդում • նախագծի կառուցում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ • կուրսային աշխատանք • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ • մագիստրոսական թեզ
N	**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Բ1	Կիրառել մանկավարժական և տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ՝ դրանք հարմարեցնելով կրթության համակարգի մարտահրավերներին, մանկավարժական ու մասնագիտական գործունեության ընթացքում լուծել տեսական ու գործնական խնդիրներ՝ ստեղծագործաբար կիրառելով մանկավարժահոգեբանական հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները:	• բացատրություն • բանավեճ • սեմինար • մոդելավորում • նախագծի կառուցում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ • մագիստրոսական թեզ

Բ2	Վերլուծել մանկավարժության ոլորտի գիտական հիմնախնդիրները, հետազոտողների՝ ընտրված թեմաներով ուսումնասիրությունների արդյունքները և եզրահանգումները՝ առաջադրելով գիտական վարկածներ, նորարական գաղափարներ, ինչպես նաև մշակել դրանց իրագործմանն ուղղված համապատասխան ծրագրային փաթեթներ և ռազմավարություններ:	• բացատրություն • բանավեճ • սեմինար • խմբավորում • խմբավորում • մոդելավորում • նախագծի կառուցում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ • մագիստրոսական թեզ
Բ3	Կատարել որակական և քանակական հետազոտություններ՝ հայտորոշելով անձի զարգացման մակարդակը, առանձնահատկությունները, ձեռքբերումները և կրթական կարիքները, մշակել մանկավարժական խնդիրների լուծման նախագծեր, հետազոտական աշխատանքներ հանրակրթության, բուհական, հատուկ և մասնագիտական կրթության ոլորտներում:	• բացատրություն • բանավեճ • սեմինար • խմբավորում • մոդելավորում • նախագծի կառուցում	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ • կուրսային աշխատանք • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ • մագիստրոսական թեզ
N	**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (ՓՈԽԱՆՑԵԼԻ) ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Գ1	Ձևակերպել ուսումնառության վերջնարդյունքները՝ ապահովելով դրանց համապատասխանությունը նպատակին, ազգային և համամարդկային արժեքներին, ինչպես նաև գնահատման ու հետադարձ կապի ապահովման կոմպետենցիաներ:	• բացատրություն • սեմինար • խմբավորում • խորանարդում • գաղափարների քարտեզ • զեկուցում • ինտերակտիվ զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • ցուցադրություններ • նախագծերի արդյունքների մասին զեկուցումներ • մագիստրոսական թեզ
Գ2	Կիրառել հետազոտության, գիտելիքի գործնական կիրառման, ինքնուրույն աշխատելու, համագործակցելու, թիմային աշխատանք կառավարելու, առնվազն մեկ օտար լեզվով հաղորդակցվելու, ամբողջ կյանքի ընթացքում ինքնակրթությամբ զբաղվելու առանցքային կոմպետենցիաներ մասնագիտական ոլորտում:	• բացատրություն • սեմինար • խմբավորում • խորանարդում • գաղափարների քարտեզ • ինտերակտիվ զրույց	• ընթացիկ առաջադրանքների ստուգումներ • թեստային առաջադրանք • գրավոր և բանավոր ստուգումներ • լաբորատոր աշխատանքներ • մագիստրոսական թեզ

Հավելված 2

«ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ		ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ							
		Գիտելիք և իմացություն			Գործնական մասնագիտական			Ընդհան-րական (փոխանցելի)	
		1	2	3	1	2	3	1	2
1.	Օտար լեզու՝ մասնագիտական հաղորդակցում			+			+		+
2.	Ժամանակակից էլեկտրոնային կրթական համակարգեր և ռեսուրսներ				+				
3.	Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն		+	+		+	+		+
4.	Ներառական կրթություն	+	+				+		
5.	Ուսուցման որակի գնահատման ժամանակակից մեթոդները և նրանց կիրառումը		+		+			+	
6.	Ծրագրավորում Java լեզվով				+	+			
7.	Ը/դ-1				+	+			
8.	Ը/դ-2	+	+	+		+	+		
9.	Ը/դ-3				+	+			
10.	Ը/դ-4	+	+	+		+	+		
11.	Ը/դ-1				+	+			
12.	Ը/դ-2	+	+	+		+	+		
13.	Ը/դ-3				+	+			
14.	Ը/դ-4	+	+	+		+	+		
15.	Մասնագիտական գործունեության հոգեբանություն		+		+	+	+		
16.	Ը/դ (Մանկավարժություն)	+	+	+	+	+	+		+
17.	Ը/դ (Հոգեբանություն)		+		+		+		
18.	Ը/դ (Ներառական կրթություն)		+				+		
19.	Ը/դ (Կրթության կառավարում)	+				+			+
20.	Ը/դ (Գիտական հետազոտությունները ճշգրիտ գիտություններում)			+		+	+		+
21.	Ժամանակակից հեռահաղորդակցական ցանցեր				+				
22.	Մանկավարժական մարդաբանություն		+				+		
23.	Ծրագրավորում iOS, Android միջավայրերում								

24.	Ը/դ-1				+	+			
25.	Ը/դ-2	+	+	+		+	+		
26.	Ը/դ-3				+	+			
27.	Ը/դ-4	+	+	+		+	+		
28.	Ը/դ-5				+	+			
29.	Ը/դ-6	+	+	+		+	+		
30.	Տրամաբանություն	+			+				
31.	Ժամանակակից հաշվողական համակարգեր				+				
32.	Բանական տեղեկատվական համակարգեր				+	+			
33.	Ը/դ-1				+	+			
34.	Ը/դ-2	+	+	+		+	+		
35.	Ը/դ-3				+	+			
36.	Ը/դ-4	+	+	+		+	+		
37.	Հետազոտական աշխատանք կիսամյակում		+	+	+	+	+		+
38.	Հետազոտական պրակտիկա		+	+	+	+	+		+
39.	Մանկավարժահետազոտական պրակտիկա	+	+	+	+	+	+		+
40.	Մագիստրոսական ատենախոսության պատրաստում	+	+	+	+	+	+	+	+
41.	Մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն			+		+			+

Հավելված 3

«Ինֆորմատիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանը
ՄԿԾ առկա ՄԿԾ հեռակա

Հաստատված է ՀՊՄՀ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի

ֆակուլտետի խորհրդի_____թ. թիվ_____նիստում

Դեկան՝ _____ Գ. Դեմիրխանյան